



**ԵԱՀԿ** Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



Հայաստանի  
ՔՀԿ-ների  
Հակակոռուպցիոն  
կոալիցիա



Ծրագիրը  
ֆինանսավորվում է  
Եվրոպական միության  
կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում  
է  
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի  
կողմից

Իրականացնող՝  
Իրավաբանների հայկական  
ասոցիացիա

Իրականացնող՝  
Հայաստանի ՔՀԿ-  
ների  
հակակոռուպցիոն  
կոալիցիա

Գործընկեր՝  
Ինֆորմացիայի  
ազատության  
կենտրոն

**ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐՂՐՄԱՆ ԵՎ  
ՕՃՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՐԳԵԼՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ՝ Ի ԴԵՄՍ  
«ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Երևան,  
Հունիս 2016թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ .....	3
a. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
b. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ .....	3
c. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ .....	7
d. ՈՒՍԿԵՐ .....	8
2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄ, ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՈՐՄԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՄ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ .....	9
3. ՕՖՇՈՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	13
a. ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆ .....	13
b. ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՎՏԱՆԳՆԵՐ .....	13
c. ՀՀ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ .....	14
d. ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ` DE-OFFSHORING .....	14
e. ՈՒՍԿԵՐ .....	17
4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ .....	19

# 1. ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ

## a. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձանց հիմնադիր կարող են հանդիսանալ թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձինք: Այնուամենայնիվ, առևտրային կազմակերպությունների դեպքում վերջնական շահույթը հիմնականում պատկանում է ֆիզիկական անձանց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավաբանական անձանց ստեղծման գործընթացը դյուրին է, իսկ վերջիններիս ֆիզիկական անձ հանդիսացող իրական սեփականատերերին հայտնաբերելը՝ բարդ, իրավաբանական անձինք հաճախ ստեղծվում կամ օգտագործվում են կոռուպցիոն հանցագործություններ կատարելու, ինդրահարույց գործարքներ իրականացնելու համար:

Վերոնշյալ պատճառով վերջին ժամանակաշրջանում միջազգային հանրությունը սկսել է ուսումնասիրել իրավաբանական անձանց գործունը փողերի լվացման, հարկերից խուսափելու և մի շարք այլ կոռուպցիոն կամ տնտեսական հանցագործությունների մեջ: Ելնելով վերոգրյալից՝ միջազգային մակարդակով ամրագրվել է իրավաբանական անձանց (հատկապես առևտրային կազմակերպությունների) ֆիզիկական անձ հանդիսացող **իրական սեփականատերերի** բացահայտման հստակ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի, փողերի լվացման կանխարգելման նպատակներով:

## b. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Փողերի լվացման դեմ 4-րդ EU հրահանգը 3.6 հոդվածում տալիս է «իրական սեփականատեր»-ի հասկացությունը՝ ցանկացած ֆիզիկական անձ,

- **ով տիրապետում է ընկերությունը,**
- **ով վերահսկում է ընկերությունը,**
- **ուր անունից գործարքը կամ գործունեությունն իրականացվում է:**

Կորպորատիվ մարմնի դեպքում, մինիմում մասնակցության աստիճանը 25 տոկոսն է: Ցանկացած ֆիզիկական անձ, ով տիրապետում է, ուղղակի կամ անուղղակի կերպով, մարմնում ավելի քան 25 տոկոս բաժնի, համարվում է իրական սեփականատեր: Եթե

որևէ անձ չի տիրապետում վերոնշյալ շեմով նախատեսված բաժնի, այն ֆիզիկական անձը, ով ավագ ղեկավար պաշտոն է զբաղեցնում, կհամարվի իրական սեփականատեր:

Այսպես՝ Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը<sup>1</sup> (ՖԱԹՖ) 2012 թվականին հրապարակել է «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ»<sup>2</sup> վերտառությամբ փաստաթուղթը:

ՖԱԹՖ ստանդարտների 24-րդ հանձնարարականը վերաբերում է իրական շահառուների բացահայտմանը՝ որպես փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, ֆինանսական հանցագործությունների կանխարգելման միջոց: Մասնավորապես, առաջարկվում է պետություններին պահանջել իրավաբանական անձանց բացահայտել իրենց իրական շահառուներին, վարել վերջիններիս գրանցամատյան, կիրառել վերահսկողության գործուն մեխանիզմներ:

Իրական շահառուների վերաբերյալ ՖԱԹՖ հանձնարարականները կատարելու իրենց պատրաստակամությունն են հայտնել **Մեծ քսանյակի երկրները**՝ դեռևս 2013 թվականի սեպտեմբերին Սանկտ Պետերբուրգում կայացած Առաջնորդների զագաթնաժողովի ընթացքում:

Իսկ **Մեծ ութնյակի** կողմից ընդունվել է «Կազմակերպությունների և այլ իրավական կառույցների կողմից չարաշահումների կանխարգելման գործողությունների ծրագրի սկզբունքեր»<sup>3</sup>-ը: Այդ սկզբունքները նախատեսում են իրական սեփականատերերի մասին տեղեկությունների հասանելիություն, այդ գործում հնարավորինս կենտրոնացված գրանցամատյանների ստեղծում, անդրադառնում են որոշ ֆինանսական գործիքների և բաժնային մասնակցությամբ կառուցվածքների ռիսկայնությանը և մի շարք այլ ելակետային դրույթների, որոնք կարևոր ուղեցույց են

---

<sup>1</sup> Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը (FATF) միջկառավարական անկախ մարմին է, որը մշակում և իրագործում է համաշխարհային ֆինանսական համակարգը փողերի լվացումից, ահաբեկչության ֆինանսավորումից և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ, իսկ վերջինիս հանձնարարականները ճանաչում են գտել որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համաշխարհային ստանդարտներ:

<sup>2</sup>Տե՛ս [https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/fatf\\_recommendations\\_\(2012\)\\_arm.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/FDK/InternationalInstruments/fatf_recommendations_(2012)_arm.pdf)

<sup>3</sup> Տե՛ս <https://www.gov.uk/government/publications/g8-action-plan-principles-to-prevent-the-misuse-of-companies-and-legal-arrangements/g8-action-plan-principles-to-prevent-the-misuse-of-companies-and-legal-arrangements>

փողերի լվացման, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպման համար:

**Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական խորհուրդը 2015 թվականի մայիսի 20-ին ընդունել են Եվրոպական միության Փողերի լվացման դեմ 4-րդ՝ 2015/849 թվակիր դիրեկտիվը<sup>4</sup>, համաձայն որի՝ Եվրոպական միության բոլոր անդամ երկրները պարտավոր են ստանալ և պահպանել իրենց տարածքում գրանցված ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ համաչափ, հստակ և թարմ տեղեկատվություն: Անդամ երկրները նաև պարտավոր են ապահովել իրական սեփականատերերի գրանցման կենտրոնական ռեգիստրի առկայությունը: Այս պարտավորությունների կատարման վերջնաժամկետ է նախատեսված 2017 թվականի հունիս ամիսը:**

**Եվրոպական միության Փողերի լվացման դեմ 2015թ. մայիսին ընդունված 4-րդ հրահանգը պահանջում է 2017թ. հունիսից Եվրոպական միության մասնակից պետություններից հիմնել կազմակերպությունների իրական սեփականատերերի ռեգիստրներ: Թեև դեռևս պարտադիր չէ հանրությանը ինֆորմացիայի բացահայտումը, սակայն 18 ամիսների ընթացքում Եվրոպական միության ազգային կառավարությունները պետք է որոշում ընդունեն վերոնշյալի վերաբերյալ: Սակայն ռեգիստրները հասանելի կլինեն այնպիսի պարտադիր մարմինների, ինչպիսին բանկերն են, ինչպես նաև այնպիսի անձանց, ինչպիսին հետաքննող լրագրողներն են, որոնք կարող են ցույց տալ «օրինական շահ» տեղեկատվությունը ստանալու գործում: Հրահանգը չկատարելու առավելագույն տուգանքները սահմանվում են առնվազն 5 մլն եվրո կամ ընկերության տարեկան շրջանառության 10%:**

ԵՄ Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի (EESC) կողմից ընդունված կարծիքը Եվրոպական միության մասնակից պետություններին ևս կոչ է անում հիմնել կազմակերպությունների իրական սեփականատերերի ռեգիստրներ: Կոմիտեն նաև առաջարկում է, որ ԵՄ-ն ֆինանսները չպետք է հասանելի լինեն նրանց համար, որոնք մերժում են բացահայտել իրենց իրական սեփականատերերին:<sup>5</sup>

<sup>4</sup> Տե՛ս <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32015L0849>

<sup>5</sup> <http://www.transparencyinternational.eu/2015/09/public-statement-business-and-civil-society-representatives-call-for-urgent-action-on-corruption-in-the-eu/#respond>

**Համաշխարհային բանկին** ուղղված՝ քաղաքացիական հասարակության 107 կազմակերպությունների կողմից ստորագրված նամակից հետո Բանկը փոխեց իր քաղաքականությունները և սկսեց հրապարակել բանկի կողմից ֆինանսավորված գնումների մյուս կողմերի իրական սեփականատերերի ինֆորմացիան:

2015թ.-ից սկսած **ԱՄՆ** Գանձապետարանի վարչությունը սկսել է հրահանգել ԱՄՆ բոլոր միջազգային ֆինանսական հաստատությունների, ինչպիսիք են Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը, գործադիր տնօրեններին պահանջել բոլոր հաստատություններից հավաքել, ստուգել և հրապարակել մասնավոր կազմակերպությունների իրական սեփականատերերի վերաբերյալ ինֆորմացիան, որը ստանում է ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորում միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցով:<sup>6</sup>

**Սլովակիան**, առողջապահության բնագավառում գնումներին վերաբերվող մի քանի սկանդալից հետո, նոր օրենք է ընդունել, որն արգելում է կազմակերպություններին, որոնք չեն բացահայտում իրենց իրական սեփականատերերին, մասնակցել պետական գնումներին: Սլովակիայում ընկերությունները, որոնք ուզում են մասնակցել հանրային տեղեկություններին, պետք է հրապարակեն իրենց վերջին իրական սեփականատերերին, և հանրային ռեգիստր պետք է հիմնվի այդ նպատակով Հանրային գնումների գրասենյակի օրենքի համաձայն:

**Մեծ Բրիտանիայում** ևս պատրաստվում են օրենսդրական փոփոխություններ կատարել, որոնց համաձայն ցանկացած ընկերություն, որը ցանկանում է կառավարության հետ գնումների մրցույթին մասնակցել, պարտավոր է բացահայտել իր իրական սեփականատերերին:

Իրական սեփականատերերի սահմանումը տրվում է նաև Ընկերությունների սեփականատերերի և վերահսկողության թափանցիկության ԱՄՆ G-8 Գործողությունների ծրագրով, որի համաձայն իրական սեփականատերերն են համարվում այն ֆիզիկական անձինք, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով իրականացնում են էական վերահսկողություն իրավաբանական անձանց նկատմամբ կամ ունեն էական տնտեսական շահ կամ իրավաբանական անձանցից ստանում են էական տնտեսական օգուտ որոշ բացառություններով: Բացառությունները ներառում

<sup>6</sup> <https://www.globalwitness.org/en/blog/how-anonymously-owned-companies-are-used-rip-government-budgets/>

են, բայց չեն սահմանափակվում ԱՄՆ այն ընկերություններով, որոնց բաժնետոմսերի առքուվաճառքը հրապարակարայնորեն է իրականացվում, դաշնային կառավարության կողմից կարգավորվող ֆինանսական հաստատությունները և գործող ընկերությունները, որոնք համապատասխանում են որոշակի աշխատակիցների և եկամուտների պահանջներին:<sup>7</sup>

Որպեսզի լուծվի անանուն կազմակերպությունների կողմից կառավարության հետ կնքվող պայմանագրերի խնդիրը, որոնք պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, կառավարությունները պետք է պարտադրեն կազմակերպություններին, որոնք ցանկանում են մասնակցել կառավարության հետ կնքվող պայմանագրերին, բացահայտել իրական անձանց, ովքեր հանդիսանում են վերջիններիս սեփականատեր կամ կառավարում են նրանց:

Սակայն, գնումներում միայն իրական սեփականատերերի վերաբերյալ ինֆորմացիայի հավաքումը բավարար չէ. Այն պետք է նաև հանրայնացվի անվճար հիմունքներով: Վիճակագրությունը ապացուցում է կոռուպցիայի մակարդակի նվազում այս դեպքում:<sup>8</sup>

### c. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- կբարձրանա գնումներում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
- շահերի բախման իրավիճակները կկանխարգելվեն,
- կոռուպցիայի մակարդակը կնվազի,
- արհեստականորեն գնաճ տեղի չունենա: Պայմանագրերի կողմերի իրական սեփականատերերի վերաբերյալ ինֆորմացիայի բացակայությունը կարող է նաև գնաճի պատճառ հանդիսանալ, քանի որ միևնույն անձանց սեփականության իրավունքով պատկանող կազմակերպությունները թաքցնում են իրենց իրական սեփականատերերին և այդպիսով կարող են մրցել միմյանց հետ միայն գինը բարձրացնելու նպատակով:

<sup>7</sup> <https://www.whitehouse.gov/the-press-office/2013/06/18/united-states-g-8-action-plan-transparency-company-ownership-and-control>

<sup>8</sup> [http://www.cgdev.org/files/1426431\\_file\\_Kenny\\_Publish\\_What\\_You\\_Buy\\_FINAL.pdf](http://www.cgdev.org/files/1426431_file_Kenny_Publish_What_You_Buy_FINAL.pdf)

#### d. ՌԻՍԿԵՐ

Հիմնական ռիսկը անձնական տվյալների պաշտպանությունն է, որը կարող է առաջանալ տվյալները հրապարակելիս:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում է համաչափության սկզբունքը, որը սահմանում է, որ *տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:*

Վերոնշյալ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ *տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում կարող է սահմանվել անձնական տվյալների հանրամատչելի տեղեկատվության ռեժիմ:*

Վերոնշյալ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *առանց անձնական տվյալների սուբյեկտի համաձայնության մշակողը կարող է անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե դա նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ:*

Այսինքն, համաչափության սկզբունքը պահպանելով և օրենքով սահմանված լինելու դեպքում՝ անհատական տվյալների պաշտպանության խախտման ռիսկ գոյություն չունի:

ԵՄ վերոնշյալ հրահանգով նախատեսված պահանջներն իրացնելիս այս հարցին անդրադարձել են նաև այլ երկրներ: Սակայն ֆինանսական ծառայությունների դատավարությունների և համապատասխանությունների փորձագետ Մայքլ Ռուքը գտնում է, որ *«օրենսդրական նորմերը սահմանելիս անհրաժեշտ է բալանս գտնել մի կողմից փողերի լվացման ռիսկերի և մյուս կողմից յուրաքանչյուր անձի անհատական տվյալների և անձնական կյանքի իրավունքի միջև: Մեծ Բրիտանիայում, օրինակ, ֆինանսական հանցագործությունների կանխումը, այդ թվում՝ փողերի լվացման, հույժ կարևորություն ունի և, ամենայն հավանականությամբ, գերակշիռ է, քան հրահանգով ընկերությունների վրա դրված բեռը»<sup>9</sup>*

<sup>9</sup> <http://www.out-law.com/en/articles/2015/june/new-eu-anti-money-laundering-rules-to-take-effect-from-26-june/>



2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄ,  
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՈՐՄԵՐԻ  
ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՄ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Ինչպես նշվեց, իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրումով շահերի բախման իրավիճակները կկանոնակարգվեն: Սակայն առկա են նաև այլ մեխանիզմներ շահերի բախման իրավիճակների ռիսկը առավել նվազեցնելու վերաբերյալ: Մասնավորապես, դա շահերի հայտարարագրման ինստիտուտի ներդրումն է: Վերջինիս իմաստը կայանում է նրանում, որ պաշտոնատար անձինք պաշտոնը ստանձնելիս ոչ միայն հայտարարագրեն իրենց գույքը և եկամուտները, այլև՝ շահերը:

Շահերի բախման կանոնակարգող դրույթների ու պետական գնումներին առնչվող իրավական մեխանիզմների վերաբերյալ իրավական կարգավորումները և դրանց կիրառությունը լավագույնս արտացոլված են **սլովենական** օրենսդրությունում, որոնք, ընդհանուր առմամբ, հավանության են արժանացել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից:

Այսպես, շահերի բախման սահմանումը տրված է «Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության մասին» Սլովենիայի օրենքում: Վերջինիս համաձայն *շահերի բախում են նշանակում այն հանգամանքները, որոնցում պաշտոնատար անձի անձնական շահը ազդում է կամ, ըստ երևույթին, կարող է ազդել իր պաշտոնական պարտականությունների անկողմնակալ և օբյեկտիվ իրականացմանը:*

Անձնական շահը բնորոշվում է որպես *նյութական կամ ոչ նյութական օգուտ ի շահ իրեն կամ ի շահ իր ընտանիքի անդամների և այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց հետ վերջինս գտնվում է կամ գտնվել է անձնական, գործնական կամ քաղաքական հարաբերությունների մեջ:*

Վերոնշյալ օրենքի 35-րդ հոդվածը, որը վերաբերում է պաշտոնյաների գործողությունների սահմանափակումներին և խախտումների հետևանքներին, ամրագրում է, որ *հանրային մարմինը կամ կազմակերպությունը, որը համաձայն պետական գնումների մասին օրենսդրության՝ կոչված է կատարել պետական գնումներ*

կամ իրականացնում է այլ ծառայություններ պետական ոլորտում, չի կարող պատվիրել ապրանքներ, ծառայություններ, կամ շինարարական աշխատանքներ այն կազմակերպություններին, որտեղ պաշտոնյան կամ նրա ընտանիքի անդամները ունեն հետևյալ դերը.

1) հանդես են գալիս որպես ղեկավար, ղեկավարող խմբի անդամ կամ իրավական ներկայացուցիչ,

2) ունեն ավելի քան 5 տոկոս մասնակցություն հիմնադիրների իրավունքներում, ղեկավարման կամ կապիտալի մեջ՝ անկախ անմիջական կամ իրավաբանական անձանց միջոցով մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այս սահմանափակումները տարածվում են նաև այն դեպքերի վրա, երբ հանրային մարմինները կամ կազմակերպությունները գործարար հարաբերությունների մեջ են գտնվում պաշտոնյաների կամ նրանց ընտանիքի անդամների հետ, որտեղ վերջիններս հանդես են գալիս որպես ֆիզիկական անձ:

Բացի այս, սլովենական օրենսդրությունը պարտադիր պահանջ է նախատեսում պետական գնումների պայմանագրերի հրապարակման առումով, և այդ կարգավորումների համաձայն՝ պետական գնումների պայմանագրերը և դրանց առնչվող բոլոր փաստաթղթերը պայմանագրերի կնքումից հետո դառնում են հրապարակային:

«Գնումների մասին» ՀՀ օրենքում նմանատիպ իրավակարգավորումներ (սահմանափակումներ) ամրագրված չեն: Ուստի, ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի կողմից առաջարկվել է հետևյալը:

I. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում լրացնել նոր 2.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ նրա հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձը (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) առևտրային կազմակերպությունում ունի 10 տոկոս կամ ավելի մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ), կամ հանդիսանում է դրա գործադիր մարմնի անդամ, ապա բարձրաստիճան պաշտոնատար

անձը պարտավոր է պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) կամ համապատասխան փաստի առաջացումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այդ մասին տեղեկատվություն տրամադրել իր գործատուի գնումների պատասխանատուին և բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված ձևով: Սույն մասով սահմանված տեղեկատվությունը հրապարակվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից:»

Մենք առաջարկում ենք մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր)-ի փոխարեն օգտագործել օրենքում արդեն իսկ սահմանված արյունակցական կապի առաջին և երկրորդ աստիճանի մեջ գտնվող անձինք եզրույթները: Բացի այդ առաջարկում ենք, որ շահերի հայտարարագրումը ներառվի գույքի և եկամուտների հայտարարագրերի մեջ, որով կլուծվի նաև վերոնշյալին չհետևելու դեպքում պատասխանատվության հարցը:

ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի կողմից առաջարկվել է նաև.

II. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) հանդիսանում են առևտրային կազմակերպություն, որոնց կանոնադրական կապիտալում պատվիրատուի բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ նրա հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) ունի 10 տոկոս կամ ավելի մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ), կամ հանդիսանում է գործադիր մարմնի անդամ: Սույն կետում նշված փաստը որոշելու նպատակով օտարերկրյա պետությունում հիմնադրված առևտրային կազմակերպությունը ներկայացնում է իր մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) և գործադիր մարմնի անդամների վերաբերյալ տեղեկատվություն»:

Օրենքի «Կնքված պայմանագրի մասին հայտարարության հրապարակումը» վերտառությամբ 10-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «հրապարակումը» բառից առաջ լրացնել «պայմանագրի, դրանում կատարվող փոփոխությունների, պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերի».

2) կատարել լրացում նոր 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն՝ տեղեկագրում հրապարակելու նպատակով, պայմանագիրը կնքվելու, դրանում կատարվող փոփոխություններ կատարելու, պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը ստանալու օրվանից հետո 7 օրացուցային օրվա ընթացքում դրանք ներկայացնում է լիազորված մարմին, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների:»

Սակայն, անհրաժեշտ է նաև վերոնշյալ դրույթը չպահպանելու դեպքում նախատեսել համապատասխան սանկցիաներ:

### 3. ՕՖՇՈՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### a. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օֆշորային ընկերություններ են համարվում այն իրավաբանական անձինք, որոնց գրանցման վայրը երկիր է կամ տարածք, որը տրամադրում է արտոնյալ հարկային ռեժիմ և չի պահանջում ֆինանսական գործարքների կատարման վերաբերյալ ինֆորմացիայի տրամադրում և բացահայտում:

Օֆշորային ընկերության իրական բաժնետերը ընկերությունների պետական ռեզիստորում չի գրանցվում, նրա լիազորը գրանցող կազմակերպությունն է, որն էլ բաժնետիրոջը տրամադրում է բաժնեմասի տիրապետման սերտիֆիկատ: Ստացվում է, որ միայն այդ սերտիֆիկատը տնօրինողն է տիրապետում այդ ինֆորմացիային՝ գրանցող ընկերությունից բացի: Սա ընդունված մեթոդ է, որից օգտվում են գաղտնի մնալու ձգտում ունեցող անձինք:

Փաստորեն, օֆշորային ընկերությունները հրապուրիչ են իրական սեփականատերերի գաղտնիությանը, հարկերի չվճարմամբ, վերահսկողական թույլ համակարգով՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի իրականացումից պաշտպանությամբ:

#### b. ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՎՏԱՆԳՆԵՐ

Այս առումով, ՀՀ ՎՊ 2013թ. հաշվետվության մեջ նշվում է. *«Ակնհայտ կերպով ավելացել է ոչ ռեզիդենտ ընկերությունների մասնակցության ակտիվությունը պետական գնումներում: Տվյալ դեպքում ռիսկային է համարվում այն, որ ոչ ռեզիդենտները մրցույթներում ստանում են շահեկան դիրք: Այդ ընկերությունների համար շահեկան է նաև այն, որ կախված իրենց կազմակերպաիրավական տեսակից, ՀՀ-ում պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները տվյալ գնման դեպքում չեն կարողանում լիարժեք կերպով իրականացնել վերահսկողություն»:* ՎՊ հաշվետվության այս հատվածը լավագույնս բացահայտում է օֆշորային գոտում գրանցված, ինչպես նաև ոչ ռեզիդենտ ընկերությունների հմայքը, նաև՝ կոռուպցիոն ևս մեկ սխեմա: Փաստորեն, այդ ընկերություններն, ըստ էության, դուրս են ՀՀ պատկան մարմինների վերահսկողությունից:

Ավելին, ՎՊ բացահայտումներից պարզ է դառնում, որ հիմնականում այդ ոչ ռեզիդենտ կամ օֆշորային գոտում գրանցված կազմակերպությունները ստեղծվել են արհեստականորեն՝ գնումների մասնակցելու համար: «Որևէ մրցույթով հետաքրքրված տեղական ընկերությունը միտումնավոր ստեղծում է որևէ ոչ ռեզիդենտ ընկերություն կամ կապ է հաստատում համանման ընկերության հետ, որպեսզի շահեկան դիրք գրավելու արդյունքում կարողանա հաղթող ճանաչվել մրցույթում և կնքել պայմանագիր: Արդյունքում, որոշ ոչ ռեզիդենտների մասնակցությունը պետական գնումներին դառնում է զուտ ձևական, գումարները փոխանցվում են հանրապետությունից դուրս: Նվազում է նաև վերահսկելիությունը:

### **c. ՀՀ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

ՀՀ-ում օֆշորային գոտիների ցանկը սահմանված է 2012 թ. հուլիսի 4-ի N 915-Ն որոշմամբ:<sup>10</sup> Նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում է հիշատակվում օֆշորների մասին, որը ներդրվել է հարկերի վճարումից խուսափելը կանխելու նպատակով:

Վերոնշյալ 2 ակտում էլ չի տրվում օֆշորային գոտիների սահմանումը: Բացի այդ, գոյություն չունի որևէ նորմ, որով օֆշորային ընկերությունների մասնակցությունը պետ. գնումներին կարգելվի:

### **d. ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ՝ DE-OFFSHORING**

Վերոնշյալ տերմինն իրենից ներկայացնում է տնտեսության հետ բերում օֆշորային գոտիներից: Դա իրականացվում է վերոնշյալ գոտիներում գրանցված ընկերությունների կողմից պետական գնումներին մասնակցության արգելք սահմանելով:

**Բուլղարիայում** 2014թ. հունվարի 1-ին «Արտոնյալ հարկային ռեժիմով երկրներում գրանցված կազմակերպությունների և իրենց իրական տերերի հետ տնտեսական և ֆինանսական» հարաբերությունների վերաբերյալ օրենքով սահմանվեց

<sup>10</sup> [http://www.taxservice.am/Shared/Documents/ TL/Taxes/Profit\\_Tax/vr\\_hhk\\_2012\\_915n.pdf](http://www.taxservice.am/Shared/Documents/ TL/Taxes/Profit_Tax/vr_hhk_2012_915n.pdf)

մասնակցության արգելք օՖշորային ընկերությունների և նրանց մասնաճյուղերի համար հիմնական տնտեսական բնագավառներում, որտեղ հանրային ֆոնդերը կուտակված են:

ՕՖշորային ընկերությունները և նրանց մասնաճյուղերը ոչ միայն չեն կարող մասնակցել պետական գնումներին, այլև չեն կարող ձեռք բերել ուղղակի կամ անուղղակի կերպով բաժնետոմսեր վարկային, ապահովագրական, կենսաթոշակների ապահովագրման հաստատություններում, հեռախոսային կապի, ռադիոյի և հեռուստատեսության օպերատորներում և այլն: Սահմանափակումները տարածվում են անկախ մասնակցության տոկոսից:

Ընկերությունները իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է գրանցեն առևտրային ռեգիստրում: Կանոնից բացառություն են կազմում հետևյալ իրավիճակները.

- ՕՖշորային գոտում գրանցված ընկերությունը տնտեսական խմբի մաս է կազմում, որի մայր ընկերությունը ռեգիդենտ է համարվում մի երկրում, որի հետ Բուլղարիան ունի ինֆորմացիայի փոխանակման իրագործելի համաձայնություն:
- Ընկերությունը, որի սեփականատերը ուղղակի կամ անուղղակի կերպով օՖշորային ընկերություն է, նշված է Բուլղարիայում կամ այլ Եվրոպական տնտեսական գոտում կարգավորվող շուկայում և վերջինիս իրական սեփականատերերը բացահայտված են տվյալ գոտուն հատուկ օրենքին համապատասխան:
- Ընկերությունը, որի սեփականատերը ուղղակի կամ անուղղակի կերպով օՖշորային ընկերություն է, տպագրված ՋԼՄ-ում ներկայացրել է տեղեկատվություն իր իրական սեփականատերերի վերաբերյալ կիրառելի օրենսդրությանը համապատասխան:
- ՕՖշորային ընկերությունը տնտեսական խմբի մի մասն է կազմում, որի մայր ընկերությունը կամ մասնաճյուղը Բուլղարական ռեգիդենտ է և վերջինիս իրական սեփականատերերը բացահայտված են, կամ վերջինիս բաժնետոմսերը դրված են առուվաճառքի Բուլղարիայի կամ այլ Եվրոպական տնտեսական գոտու երկրում:

Եթե բացառությունը կիրառվել է սուտ տեղեկատվության հիման վրա, պատժիչ միջոցներ պետք է կիրառվեն, մասնավորապես՝ ընկերությունը պետք է դուրս հանվի

գնման գործընթացից և համաձայնությունը պետք է միանգամից խզվի՝ առանց նախնական ծանուցման: <sup>11</sup>

**Ռուսաստանի Դաշնությունը փոփոխություններ է իրականացրել «Պետական գնումների» մասին օրենքում 2015թ. հուլիսի 13-ին, որի համաձայն օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունները չեն կարող մասնակցել գնումներին<sup>12</sup>:**

Գնումների մասնակիցը հաստատում է, որ օֆշորային ընկերություն չէ՝ տրամադրելով Իրավաբանական անձանց միասնական պետական ռեգիստրից (USRLE) քաղվածքի պատճենը, որը ստացել է ոչ ավելի, քան «Պետական գնումների» մասին օրենքում սահմանված գործողության օրվանից վեց ամիս առաջ կամ, օտար կազմակերպությունների համար, տրամադրելով համապատասխան պետության համապատասխան օրենքներով սահմանված իրավաբանական անձի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի պատշաճ կերպով վավերացված ռուսերեն թարգմանությունը:

Գնումների հանձնաժողովը վերանայում է, արդյո՞ք գնումների մասնակիցների համապատասխանության պահանջը, որ դրանք չլինեն օֆշորային ընկերություններ, պահպանվել է, բացառությամբ էլեկտրոնային աճուրդների և նախընտրական ընտրություններ դեպքերի: Էլեկտրոնային աճուրդի դեպքում մասնակցի համապատասխանությունը սույն պահանջին ապահովվում է էլեկտրոնային հարթակի օպերատորի միջոցով, երբ ընթացակարգի մասնակիցը ակրեդիտացվում է էլեկտրոնային հարթակի համար:<sup>13</sup>

Հաճախորդը կամ գնումների հանձնաժողովը պետք է վերացնեն գնումների մասնակցին գնումներին մասնակցությունից կամ մերժեն պայմանագիր կնքել հաղթողի հետ եթե ցանկացած ժամանակ, մինչև պայմանագրի կնքումը, բացահայտվում է, որ մասնակիցը օֆշորային ընկերություն է<sup>14</sup>:

---

<sup>11</sup> Wolf Theiss Alert Off-Shore companies, January 2014

<sup>12</sup> Մաս 1, Հոդված 31, Պետական գնումներին մասին ՌԴ օրենք

<sup>13</sup> Public procurement: survey of changes to legislation in 2015 and 2016, BEITEN BURKHARDT Rechtsanwalts-gesellschaft mbH, December 2015

<sup>14</sup> Մաս 9, Հոդված 31, Պետական գնումներին մասին ՌԴ օրենք



## e. ՌԻՍԿԵՐ

ՀՀ-ը վավերացրել է 2014թ. հոկտեմբերի 10-ին «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, որի 25-րդ հավելվածը վերաբերում է Գնումների կարգավորման կարգին: Վերոնշյալ կարգում սահմանվում է «Ազգային ռեժիմ»-ը՝ *որպես ռեժիմ, որով նախատեսվում է, որ անդամ պետություններից յուրաքանչյուրը պետք է գնումների նպատակներով՝ անդամ պետությունների տարածքներից ծագող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, այդպիսի ապրանքներ առաջարկող, աշխատանքներ իրականացնող և ծառայություններ մատուցող՝ անդամ պետությունների մատակարարների և հնարավոր մատակարարների համար ապահովի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որն ապահովել է իր պետության տարածքից ծագող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքներ տրամադրող, աշխատանքներ կատարող և ծառայություններ մատուցող մատակարարների ու հնարավոր մատակարարների համար:*

Սակայն վերոնշյալ կարգի 32-րդ կետով սահմանվում է նաև, որ *անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրությամբ սահմանված միակողմանի կարգով բացառիկ դեպքերում սահմանելու ազգային ռեժիմից բացառություններ՝ 2 տարուց ոչ ավելի ժամկետով:*

Պայմանագրի կողմերն են նաև Ռուսաստանը, Ղրղզստանը, Բելառուսիան և Ղազախստանը, որոնք չեն համարվում օֆշորային գոտիներ:

ՀՀ-ն վավերացրել է նաև Առևտրի համաշխարհային Կազմակերպության «Պետական գնումների մասին» համաձայնագիրը 2011թ.-ին:<sup>15</sup>

ՀՀ ստանձնած պարտավորությունները «Պետական գնումների մասին», համաձայնագրի ներքո մասնավորապես վերաբերվում են 4-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքի սկզբունքի, որի համաձայն *Համաձայնագրի կողմը չպետք է առավել նպաստավոր կերպով վերաբերվի տեղական մատակարարողների հետ, քան Համաձայնագրի այլ կողմերի, կամ առավել խտրականության ենթարկի տեղական մատակարարներին օտար սեփականատերերն ունենալու հիմքով:*

Սակայն ոլորտային մասնագետները նշում են, որ վերոնշյալ համաձայնագրով պետությունների համար նախատեսվում են նաև հնարավորություններ՝ սահմանել այլ ռեժիմներ:

<sup>15</sup> [https://www.wto.org/english/tratop\\_e/gproc\\_e/gproc\\_e.htm](https://www.wto.org/english/tratop_e/gproc_e/gproc_e.htm)

Այդուամենայնիվ, ներկայումս, վերոնշյալ համաձայնագիրն ունի 46 կողմ պետություն և 15 պետություն գտնվում են պայմանագրին միանալու փուլում կամ պլանավորում են միանալ: Այս բոլոր երկրներից օֆշորային գոտիներ կարող են համարվել միայն հետևյալ պետությունները՝ Չինաստան (Մակաու), Կիպրոս, Հոնկ Կոնգ, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մալթա, Հոլանդիա (Արուբա), Սեյշելյան կղզիներ, Սինգապուր, Շվեյցարիա, ԱՄՆ (Delaware, Guam, Oregon, Puerto Rico, Virgin Islands, Wyoming):

Բացի այդ, Բուլղարիան 2007թ.-ից, ինչպես ՀՀ-ը 2011թ.-ից վավերացրել են Առևտրի համաշխարհային կազմակերպության «Պետական գնումների մասին» համաձայնագիրը

Հետևաբար, Կառավարության 915-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելով և օֆշորային գոտիների ցանկից վերոնշյալ տարածքները և պետությունները հանելով, այլ օֆշորային գոտիների կողմից ՀՀ պետական գնումներին մասնակցելու արգելքը չի խախտի ՀՀ ստանձնած պարտավորությունները: Սակայն քննարկումների արդյունքում որոշվեց ոչ թե առհասարակ բացառել օֆշորային ընկերությունների կողմից գնումներին մասնակցելը, այլ առավել ճկուն կարգավորումներ տալ կոռուպցիայի նվազման համար իրական սեփականատերերի ներդրման լույսի ներքո, որոնք կներկայացվեն ստորև:

#### 4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

- I. Իրական սեփականատերերի բացահայտման նպատակով անհրաժեշտ է ստեղծել ռեգիստր, որին ընկերությունները պարտավոր են տրամադրել տեղեկատվություն այն մասնավոր անձանց վերաբերյալ, որոնք հանդիսանում են իրենց ոչ միայն նախկին, այլ՝ իրական սեփականատերերը: Նման ռեգիստր կարող է հանդիսանալ գործող մարմիններից, ինչպիսին Իրավաբանական անձանց պետական միասնական ռեգիստրն է, օրինակ՝ ՌԴ, (Բուլղարիայում առևտրային ռեգիստրն է) կամ այդ նպատակով հիմնվի այլ ռեգիստր:
- II. Անհրաժեշտ է փոփոխություն կատարել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում և սահմանել, որ իրավաբանական անձինք գրանցվելիս տրամադրեն տեղեկատվություն իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ:
- III. Օրենսդրորեն սահմանել, որ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի հրապարակային:
- IV. Քանի որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնետիրական ընկերություններին թույլ չի տրվում անձամբ վարել իրենց թողարկած բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը, և այն պետք է հանձնվի ընկերության հետ չփոխկապակցված մասնագիտացված կազմակերպությանը, որն իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր, որը հանդիսանում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունը, և բաժնետերերի ցանկը հրապարակման ենթակա չէ, առաջարկում ենք սահմանել վերոնշյալ ցանկի հրապարակայնություն:
- V. Համապատասխան օրենսդրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո սահմանել ողջամիտ ժամկետ, որի ընթացքում ՀՀ-ում արդեն գրանցված ընկերությունները պարտավոր են տեղեկատվություն ձեռք բերել իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ և պահպանել ինֆորմացիան արդիական:

VI. Սահմանել, որ այն դեպքում, եթե ընկերությունը դիտավորյալ չի կատարում վերոնշյալ պարտականությունները, նույնիսկ այդ մասին պատշաճ ծանուցվելուց հետո, ապա ընկերությունները և այն աշխատակիցները, որոնց վրա դրված է ռեզիստրին տեղեկատվության տրամադրման պարտականությունը, օրինակ՝ գործադիր տնօրենը, կարող են ենթարկվել պատասխանատվության: Այն կարող է ներառել

- տուգանք օրենքով նախատեսված ժամկետից հետո մինչև տեղեկատվության տրամադրումը յուրաքանչյուր օրվա համար,
- սանկցիաներ, որոնք կապված են այնպիսի գործունեության հետ, որի համար կազմակերպությունը ցանկանում է գրանցվել,
- պետական գնումներին մասնակցելու արգելք,
- ռեզիստրից հեռացում,
- քրեական պատասխանատվություն որպես առավելագույն սանկցիա՝ 2 տարվա ազատազրկում և տուգանք:

Մեծ Բրիտանիայում առկա են վերոնշյալ առաջարկները<sup>16</sup>, ինչպես նաև Սլովակիայում գործում են որոշները:

VII. Ռեզիստրում գրանցված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար անհրաժեշտ է սահմանել, որ

- i. Իրական սեփականատերերի ռեզիստրին այնպիսի օրենսդրական լծակների տրամադրումը, ինչպիսիք են բանկային և հարկային գաղտնիքների տիրապետումը, որպեսզի վերջինս ի սկզբանե հնարավորություն ունենա ստուգել տրամադրված տեղեկատվության հավաստիությունը:
- ii. Նման իրավասությունների տրամադրումը գնումների գործընթացի կարգավորումն ու համակարգումն իրականացնող լիազորված մարմնին, որպեսզի վերջինս կարողանա ստուգել ռեզիստրում գրանցված տեղեկատվության հավաստիությունը: Նման կարողություններով օժտված է օրինակ Հանրային գնումների գրասենյակը Սլովակիայում:<sup>17</sup>

<sup>16</sup> Enhancing transparency of beneficial ownership information of foreign companies undertaking certain economic activities in the UK, MARCH 2016, Department for Business, Innovation and Skills

<sup>17</sup> <http://spectator.sme.sk/c/20058620/new-law-firms-in-public-tenders-will-reveal-their-final-beneficiaries.html>

VIII. Սահմանել են ճկուն մեխանիզմներ և իրավագործություններ ընկերությունների համար, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեն ձեռք բերել տեղեկատվություն իրենց սեփականատերերից իրական սեփականատերերի վերաբերյալ: Այն դեպքում, երբ ընկերության սեփականատերը չի պատասխանում տեղեկատվության պահանջի համար ծանուցմանը սահմանված ժամկետում, այդ իրավագործությունները կարող են ներառել օրինակ վերոնշյալ անձանց շահի սառեցումը, որի հետևանքով վերջինս հնարավորություն չի ունենա ստանալ վճարումներ դրա վաճառքից և այլն, ինչպես առաջարկվում է Մեծ Բրիտանիայում:

IX. Անհրաժեշտ է սահմանել, որ պետական գնումներին մասնակցել ցանկացող ընկերությունները գնումների կազմակերպչին պարտավոր են տրամադրել տեղեկատվությունը հետևյալ ընթացակարգով`

- i. ՀՀ-ում գրանցված ընկերությունները կարող են տրամադրել Իրական սեփականատերերի ռեգիստրում իրենց գրանցման համարը կամ իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը ուղղակի կերպով,
- ii. Եվրոմիության երկրներում գրանցված ընկերությունները 2017թ. հունիսից, ինչպես նաև այն երկրները, որոնք ևս հիմնադրել են իրական սեփականատերերի ռեգիստրներ, կարող են տրամադրել իրենց երկրներում իրական սեփականատերերի գրանցման ռեգիստրից պատշաճ վավերացված քաղվածք կամ` իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը ուղղակի կերպով,
- iii. Այլ երկրներում գրանցված ընկերությունները, որոնք չունեն իրական սեփականատերերի ռեգիստրներ, պետք է տրամադրեն իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը ուղղակի կերպով:

X. Օրենսդրորեն սահմանել, որ

- i. Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության չբացահայտումը ընկերությունների կողմից հանդիսանում է գնումներին մասնակցության արգելք,
- ii. Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության չբացահայտումը ընկերությունների կողմից գնումներին մասնակցության հայտը դարձնում է թերի և անհամապատասխան: Գնումների

**կազմակերպիչը իրավունք ունի և մերժել պայմանագրի կնքումը և հնարավորություն տալ լրացնել բացակայող տեղեկատվությունը:**

Մակայն, այդպես վարվելիս, գնումների կազմակերպիչը պարտավոր է հաշվի առնել հնարավոր բացասական ազդեցությունը մնացած մասնակիցների վրա, ովքեր համապատասխանում են պահանջներին: Քանի որ վերոնշյալ տարբերակի դեպքում գնումների կազմակերպչին տրվում է լայն հայեցողական լիազորություններ, ինչպես նաև հնարավոր բացասական ազդեցության հաշվի առնելը գնահատողական կատեգորիա է, որը կարող է կոռուպցիոն ռիսկեր պարունակել, ուստի սվյալ տարբերակին հակված չենք:

- iii. Իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության չբացահայտումը նախատեսվում է որպես նախապայման, որպեսզի գնման գործընթացը իրականանա: Գնումների կազմակերպիչը պարտավոր է չստորագրել պայմանագրեր այն մասնակիցների հետ, որոնք պայմանագրի ստորագրման պահին ռեգիստրին չեն ներկայացրել իրենց իրական սեփականատերերին:

Հետևաբար, պետական գնումներին մասնակցող բոլոր մասնակիցները պետք է պատրաստ լինեն, որ վերոնշյալ տեղեկատվությունը կպահանջվի գնահատման գործընթացում ամենաբարձր բալեր հավաքած մասնակցից: Վերոնշյալ 3 տարբերակներն էլ առաջարկվում է նախատեսել Մեծ Բրիտանիայում:

Իրական սեփականատերերի բացահայտման պահանջը վերաբերվում է նաև ենթամատակարարներին և այն անձանց, ովքեր ապահովում են ընկերությունների տնտեսական և մասնագիտական կարողությունները տենդերում: Նմանատիպ դրույթ սահմանված է Սլովակիայի օրենսդրությամբ:

**XI. Անհրաժեշտ է սահմանել պայմանագրի խզման հետևյալ դեպքերը՝**

- i. Երբ ընկերությունը տրամադրում է կեղծ կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն իր իրական սեփականատերերի վերաբերյալ,
- ii. Երբ ընկերությունը իր իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագրի կատարման ամբողջ ընթացքում չի թարմացնում:

Նման կարգավորումներ առաջարկվում է նախատեսել Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ:

- XII. Եթե տեղերի կազմակերպիչը այնուամենայնիվ պայմանագիր է կնքում այնպիսի ընկերության հետ, որի իրական սեփականատերերը բացահայտված չեն, պատժվում է տուգանքով: Որպես տուգանքի չափ կարելի է սահմանել պայմանագրի գնի 5 տոկոսը, ինչպես օրինակ նախատեսված է Սլովակիայում:
- XIII. Եթե ընկերությունն է խախտում այս դրույքը՝ չի տրամադրում իր իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը և պայմանագիր է կնքում, պետք է պատասխանատվության ենթարկվի: Հնարավոր է տուգանքի սահմանումը 10.000-ից մինչև 1 միլիոն եվրոյի չափով և պետական գնումներին մասնակցելու իրավունքից 3 տարվա զրկմամբ, ինչպես օրինակ Սլովակիայում է նախատեսված: Անհրաժեշտ է նման պատասխանատվության սահմանումը նաև այն դեպքերում, երբ ընկերությունը չի տրամադրել վերջին տեղեկատվությունը իր իրական սեփականատերերի վերաբերյալ: